

ԼՈՒՅՍԵՐ ՓԲԸ-ի պարտատոմսերի ձեռքբերման համար քայլերի հաջորդականություն

Քայլ 1. Բացել (եթե արդեն չունեք) դրամային բանկային հաշիվ ՀՀ առևտրային բանկերից որևէ մեկում:

Քայլ 2. Բացել (եթե արդեն չունեք) արժեթղթերի սեփականատիրոջ հաշիվ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ում, ԱՐՄԲՐՈԿ ԲԲԸ-ում կամ որևէ այլ լիցենզավորված պահառուի մոտ:

Ֆիզիկական անձանց դեպքում հաշվի բացման համար անհրաժեշտ են.

- անձնագիր և ՀՕՀ կամ նույնականացման քարտ,
- Կոնտակտային տվյալներ (հասցե, հեռախոսահամար, էլ. փոստ) BA A

իրավաբանական անձանց և ֆոնդերի դեպքում հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը պետք է ճշտել պահառուից:

Քայլ 3. Լրացնել հայտ-հանձնարարականները և պատշաճ կերպով ներկայացնել տեղաբաշխողին:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը համարվում է պատշաճ կերպով ներկայացված Տեղաբաշխողին, եթե այն առաքվել է Տեղաբաշխողին առձեռն կամ Տեղաբաշխողի համաձայնության դեպքում՝ կապի այլ միջոցով:

Տեղաբաշխողի հետ կապի միջոցներն են՝

*Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 39,
Էլեկտրոնային փոստ՝ armenbrok@armenbrok.com, ib@armenbrok.com,
Հեռ.՝ +37411 590000, +37496 538700,
Սի Բի Էյ Նեթ՝ Armenbrok OJSC/CBANet:*

Եթե արժեթղթերի հաշիվը չի բացվել տեղաբաշխողի մոտ, ապա հայտ-հանձնարարականի հետ Տեղաբաշխողին ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

Ֆիզիկական անձանց դեպքում.

- անձնագիր և ՀՕՀ կամ նույնականացման քարտ,
- ՀՀ որևէ բանկում բացված դրամային հաշվեհամար
- Արժեթղթերի հաշիվ բացված Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ում կամ որևէ այլ լիցենզավորված պահառուի մոտ:
- Կոնտակտային տվյալներ (հասցե, հեռախոսահամար, էլ. փոստ)

իրավաբանական անձանց և ֆոնդերի դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը պետք է ճշտել տեղաբաշխողից.

Քայլ 4. Հայտ-հանձնարարականը ներկայացման, օրը՝ մինչև ժամը 16:30-ը, ստորև նշված հաշվեհամարներից որևէ մեկին կատարել հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի վճարում:

Գները ըստ օրերի հրապարակված են ԱՐՄԲՐՈԿ ԲԲԸ-ի և Լույսեր ՓԲԸ-ի կայքերում (<https://www.armenbrok.am/hy/services/investment-banking>, <https://luyser.am/hy/about-us>):

Բանկային տվյալներ՝

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ - 2500000122610100

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ - 11817000030102

«Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ - 217004089991002

«Էվոկա Բանկ» ՓԲԸ – 1660000928160200

Ստացող՝ ԱՐՄԲՐՈԿ ԲԲԸ

Հիսք՝ Լույսեր ՓԲԸ-ի պարտատոմսերի ձեռքբերման համար